Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2025 թ. փետրվարի 27-ի N 13-Լ հրամանի

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՄԲ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՄԲ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի
Մասնակցային բյուջետավորմամբ իրականացված և սուբվենցիա ստացած ծրագրի անվանումը

«Գնդեվազ բնակավայրի խմելու ջրի խողովակաշարի վերանորոգման ծրագիր»

1.Ծրագրի իրավական հիմքերը՝

1. ՀՀ կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը» հաստատելու մասին № 1890-Ն որոշում,
2. Ջերմուկ համայնքի ավագանու 27.12.2023 թ.-ի № 107-Ա որոշում,
3. Ջերմուկ համայնքի ավագանու 20.02.2024 թ.-ի № 9-Ա որոշում,
4. Ջերմուկ համայնքի ղեկավարի 17.01.2024թ.-ի № 14-Ա որոշում,
5. Ջերմուկ համայնքի ղեկավարի 22.01.2024թ.-ի № 21-Լ որոշում:

(Նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ կառավարության համապատասխան որոշման ամսաթիվը և համարը)

2.Առաջարկ-նախագծի (որի հիման վրա մշակվել է մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծագիրը) հեղինակի անվանումը, Գնդեվազ գյուղի բնակիչ՝ Մեսրոպ Արամի Հարությունյան
(անձնագիր՝ AS0306946):

(Նշել՝ բնակչի դեպքում անուն, հայրանուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի համարը, իսկ հասարակական միավորման դեպքում անվանումը և պետական գրանցման համարը)

3.Առաջարկ-նախագծի օգտին քվեարկության արդյունքները և մասնակցային բյուջետավորման գործընթացը կառավարող հանձնաժողովի կազմած արձանագրության համարը

1. Ջերմուկ համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը իրականացնելու, գործընթացի կառավարման հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների ամփոփման նիստի արձանագրության հղումը՝
https://www.jermuk.am/upload/DocFlow/PublicDiscussion/We2430609411031764_IMG_00011.pdf ,

2. քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը՝ 6785 անձ,

3. առաջարկ-նախագծի օգտին քվեարկածների թվաքանակը՝ 210 կամ 3.09 %-ը ընդհանուր թվաքանակի մեջ:

(Քվեարկության արդյունքների վերաբերյալ համայնքի պաշտոնական կայքի համապատասխան տեղեկատվությանը հղումը, նշել քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը և առաջարկ-նախագծի օգտին քվեարկածների թվաքանակը և %-ը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակի մեջ)

4. Համայնքի/բնակավայրի բնակչության թվաքանակը, քվեարկության իրավունք ունեցողների թվաքանակը՝ համայնք՝ 8291 բնակիչ, ծրագիրն ընդգրկող բնակավայր՝ 868 բնակիչ, քվեարկության իրավունք ունեցողների թվաքանակը՝ 6785:

(Նշել համայնք՝ .... բնակիչ, ծրագիրն ընդգրկող բնակավայր՝ ... բնակիչ, քվեարկության իրավունք ունեցողների թվաքանակը)

5. Ծրագրի սկիզբը և ավարտը
սկիզբ՝ «29» մարտի 2024 թ., ավարտ՝ «26» դեկտեմբերի 2024թ.:

6. Ծրագրի նախագծային արժեքը 36,879.95 հազ. դրամ:

7.Ծրագրի նպատակը՝ Ծրագրի նպատակը բնակչությանը խմելու ջրի մատակարարման հուսալի, կայուն, անվտանգ և մատչելի ծառայությունների ապահովումը, մատակարարման և կառավարման համակարգերի արդիականացումն է, ինչպես նաև ջրային պաշարների արդյունավետ և խնայողական օգտագործումը:

(Ներկայացնել երկարաժամկետ կտրվածքով ընդհանուր նպատակը, որին հասնելուն միտված է տվյալ ծրագիրը)

8.Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի մատակարարումը իրականացվում է «Յոթ աղբյուր» և «Տաք ջրեր» տեղանքների աղբյուրներից: Առաջին աղբյուրը գտնվում է 2022 թվականին ադրբեջանական սեպտեմբերյան ագրեսիայի հետևանքով ձևավորված նոր շփման գծին մոտ: Այս տեղանքից մատակարարվող ջուրը ապահովում է խմելու ջրի մի մասը, իսկ մյուս մասը մատակարարվում է «Տաք ջրեր» տեղանքից: Այս խողովակաշարը կառուցումից ի վեր չի հիմնանորոգվել: Խողովակաշարի սկզբնամասի 1 կիլոմետրանոց և Գնդեվազ գյուղին մոտ 1 կիլոմետրանոց հարվածը խիստ քայքայված է, որի հետևանքով կա խմելու ջրի զգալի կորուստ, առկա ջրի քանակը չի բավարարում գյուղի բնակիչների կարիքները, եղածն էլ չի բավարարում ջրի որակի ստանդարտներին:

Հայ-ադրբեջանական լարված հարաբերությունների ֆոնին անհրաժեշտ է գյուղն ապահովել խմելու ջրի մատակարարման, լիարժեք գերծող մեկ այլ խողովակաշարով, որը

հնարավորություն կտա «Յոթ աղբյուր» տեղանքի ջրամատակարարման համակարգի խափանման դեպքում գյուղն ապահովել խմելու ջրով:

(Մանրամասն նկարագրել, թե համայնքային նշանակության ինչ խնդիրներ է լուծվել)

9.Ծրագրով հաստատված վերջնական ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացման նպատակին հասնելու համար ակնկալվող արդյունքներն են՝

1. Նվազեցնել ջրի կորսուստը,
2. Ապահովել Հայաստանի Հանրապետության պետական ստանդարտների պահանջներին համապատասխանող որակի խմելու ջուր,
3. Բարձրացնել ջրօգտագործման արդյունավետությունը,
4. Ապահովել գյուղի շրջօրյա ջրամատակարարումը,
5. Ապահովել նորմատիվային ճնշումները:

(Նշել՝ կոնկրետ, չափելի և իրատեսական ցուցիչներ)

10. Ծրագրի իրականացման փաստացի արժեքը 24,285.398 հազ. դրամ:

11. Ծրագրի փաստացի շահառուները՝ գյուղի 200 բնակիչներ՝ 60 տնային տնտեսությունից:

(Նկարագրել փաստացի շահառուների խումբը և քանակը)

12. Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները՝

-հիմնանորոգման ենթակա խողովակաշարի տեղանքի ուսումնասիրություն,
-հիմնանորոգման աշխատանքների նախագծման տեխնիկական բնութագրի կազմում, ՃՀԱ տրամադրում,
-աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռք բերման մրցույթի հայտարարում, դրանց փորձաքննության անցկացում,
-շինարարական աշխատանքների կատարման մրցույթի հայտարարում, հաղթող մասնակցի ընտրում,
-մրցույթում հաղթած կազմակերպության հետ պայմանագրի կնքում,
-շինթույլտվության տրամադրում,
-կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացում, աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության իրականացում,
-աշխատանքների արդյունքների ընդունում:

(Նշել փաստացի իրականացված միջոցառումները՝ յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների նկարագրությամբ)

13. Ծրագիրն իրականացնողները և աջակցողները՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Ջերմուկի համայնքապետարան:

(Թվարկել ծրագրի յուրաքանչյուր միջոցառման մասով իրականացման մասնակիցների (ՏԻՄ, իրավաբանական անձ, ծրագրի իրականացման նպատակով հավելյալ ֆինանսական միջոցներ տրամադրող անձ և այլն) անվանումները

14.Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը՝

Ծրագրի իրականացման նպատակին հասնելու համար ակնկալվող արդյունքներն են՝

1. կառուցվել է 2,082 գմ ջրագիծ, տեղադրվել են օդհան հանգույցներ,

2. նվազեցվել է ջրի կորստուստը,

3. ապահովվել է հայաստանի հանրապետության պետական ստանդարտների պահանջներին համապատասխանող որակի խմելու ջուր,

4. բարձրացել է ջրօգտագործման արդյունավետությունը,

5. ապահովվել է գյուղի շրջօրյա ջրամատակարարումը,

6. ապահովվել են նորմատիվային ճնշումները:

Ծրագիրը բխում է ՀՀ կառավարության ծրագրից, համայնքի զարգացման ծրագրային և ռազմավարական նշանակության փաստաթղթերից:

Միջնաժամկետ արդյունքում ակնկալվում է, որ համայնքի մի բնակավայր կունենա խմելու ջրի որակի պետական ստանդարտներին համապատասխանող խմելու ջուր և շուրջօրյա ջրամատակարարում:

Երկարաժամկետ արդյունքում ակնկալվում է, որ համայնքը կունենա գյուղին խմելու ջրով մատակարարման հուսալի և այլընտրանքային խողովակաշար:

(Նշել ծրագրի համապատասխանելիությունը ՀՀ կառավարության ծրագրով և համայնքի զարգացման ծրագրային և ռազմավարական նշանակության փաստաթղթերով սահմանված նպատակների հետ:
Ներկայացնել ծրագրի ավարտից հետո միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները: Հիմնավորել՝ ցույց տալով կապը ծրագրի շրջանակներում լուծվող խնդիրների և իրականացվող գործունեության արդյունքների հետ: Սպասվող արդյունքների նկարագրությունը պետք է լինի հնարավորինս կոնկրետ, իրատեսական, գնահատելի և չափելի:)

15. Հաշվետվության հրապարակումը

համայնքի պաշտոնական կայքէջում հրապարակման ամսաթիվը «03» մարտի 2025թ.:

(Նշել համայնքի պաշտոնական կայքէջում տեղադրման ամսաթիվը և հղումները)

/ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ